



ՎԱՌՆԱՅԻ ԵՐԳԵՑԻԿ ԽՈՒՄԵՐ

Վառնայի երգեցիկ խումբը որ կազմուած է մէկ տարիէ ի վեր, մինչեւ հիմայ իր եռանդուն աշխատութիւնով կրցած է բաւական յաջող կերպով երգել հայկական ժողովրդային երգեր. խմբին եռանդուն անդամները, որոնք կը բաղկանան Վառնայի երիտասարդներէն և պատանիներէն, քիչ ժամանակուան մէջ կրցած են ժողովրդին համակրութիւնը զըրաւել լինովին, իրենց համեստ ու անյուշահատելիութեն ըստն գործունէութիւնովը. մասնաւորապէս պէտք է յիշել Պ. Ն. Պ. Ամիրխանեանցը, որ երբէք չէ թերացած իր առաջնորդող պարտականութեան մէջ. մինչեւ իսկ խմբէն ներթափանչ ոչ մէկ շահ չսպասելով հանդերձ. Վառնայի օրիորդներն ալ կարեւոր տեղ մը գրաւած են խմբին մէջ. ուրիշն ուրախ ենք ըսելու որ մեր հասարակական գործերու մէջ իրազական սեռն ալ իր օժանդակութիւնը նուիրելու պարտականութիւնը սկսած է սնուցանել իր մէջը իր նմաններուն հանդէպ, պարտականութիւն մը որ անշուշտ անխտելիօրէն ամենէն մեծն է ու նուիրականը, քանի որ մենք ապագային մէջ ամենէն մեծ դերը, ամենէն մեծ զոհողութիւնը մեր մայրերէն սպասելու հարկին մէջ կը գտնուինք, ու որչափ ուրախալի երեւոյթ մը պիտի ըլլար անշուշտ մեզ աւանուս համար եթէ մեր մէջն ալ կէնը չի սահմանափակուէր միայն իր տնային պէտքերը մտածելուն մէջ, ու մտէր մեր մէջը, իջնէր հրապարակ միասին գործելու, զոհելու իր եղբայրներուն հետ. ամէն տեսակ զոհողութիւն, ամէն տեսակ անձնուիրութիւն երբէք չկարենային անոր փափուկ սիրտը յուսահատեցնել, այլ ընդհակառակը անիկա ամէն խոչնդոտի, յոռի սովորութիւններու, ապուշ նախապաշարութիւններու ու ժողովուրդի արմար անհասկացողութիւններու դէմ դնելով, սկսէր բարին ու իսկականը իսկապէս ճանչնալ ու զայն միայն պաշտպանել ամենայն անվեհերութեամբ. ու այն ասեմ միայն մենք պիտի գտնէինք իսկական դաստիարակութիւնը ու պարտաճանաչութեան ըմբռնումը մեր իրազական սեռին մէջ, որ ափսոսներկային մէջ իր ամենէն յետագէմ քայլերուն մէջն է. կարծես մեր իրական սեռը բոլորովին քարացած ըլլայ յառաջադիմութեան լոյսի ու ճշմարտութեան սկզբունքներու կիրառման հանդէպ:

«Նարժումբի այսօրուան թիւով ուրախութեամբ կը հրատարա-

կենք Երգեցիկ խմբին յայտարարութիւնը, որ իր երկրորդ նուագահանգէսը պիտի տայ շաբաթ զիշեր ինպատակ ազգ. երկսեռ վարժարաններու. նուագահանգէսին մէջ բեմ պիտի ելլեն Վառնայի պատուաւոր ընտանիքներու պատկանող մէկ քանի օրիորդներ ալ. ուրիշն, ժամանակը կը տեսնենք առաջարկելու «Գողթան» խմբին, որ ձեռնարկէ հրաւրել խմբին մէջ չգտնուող ուրիշ օրիորդներ ալ. ու երբէք չենք յուսար որ Վառնայի օրիորդներուն մէջ պիտի գտնուին այնպիսիներ, որոնք մերժելու տրամադրութեան մէջ ըլլան, մասնակցելու գործի մը որ կը ձգտի երգեցողութեան ճաշկեր զարգացնել հայ հասարակութեան մէջ. և ինչո՞ւ չկարգայինք խմբին յայտարարութեան մէջ օր. Լիբա Ամիրխանեանցի անունը, որ իր արհեստական հմտութեամբ աւելի մեծ փայլ մը պիտի տար նուագահանգէսին ապահովարար:

Լիբայոս ենք թէ՛ Վառնայի հասարակութիւնն ալ պիտի չզլանայ իր ներկայութեամբ քաջալերել այս նուագահանգէսը, որուն հասոյթը յատկացուած է իր զուակներու դաստիարակման գործին:

Մուրաւս—Մոկրաւս

ԱԶՆՏՈՒԹԵ ԱՆ ԸՎԻՊՈՒՐՉԻՆ

Մենք այս պահուս մեր ձեռքին ասկի ունինք նոր հլատարակուած պուլկարերէն սիրոյն գրքոյկ մը, 84 երեսէ բաղկացած՝ բաւական մաքուր տպագրութիւնով:

Փիլիպէցի պ. Անդրէաս Բակուրեանին «Ղարբոնէն» պուլկարերէնի թարգմանած գրքոյկն է ասիկայ, որու մասին արդէն ամենէն արտաքին գրուած էր «Նարժումբի» մէջ:

Գրքոյկը կը պարունակէ նախաբան մը պուլկար ծանօթ ընկերավարական Յօքթօր Բաքովքիէն, ուրիշ նախաբան մը թարգմանիչէն, հայ յեղափոխական կեանքէ 4 հիանալի պատկերներ, «Ուստաւորը ազատութեան» դին, կուրի «գաշտում» և «հայգուրի» նոր տարին «Ղարբոնէն» և «քրքիչները» Վարդգէսէն:

Թարգմանիչը ազատութեան ոգիին մէջ յիշուած պատմական անունները և վայրերը ընթերցողին ծանօթացնելու համար գրքոյկին վերջին 16 երեսներուն մէջ զետեղած է ընդարձակ ծանօթութիւններ և տեղեկութիւններ, որոնք քաղուած են—ինչպէս ինքը կըսէ իր յառաջաբանին մէջ— Գրօշ, կէն և ուրիշ պաշտօնական ու կիսապաշ-

տօնական լրագիրներէն ու հանդէսներէն:

Ի՞նչքա՞ն առայժմ ժամանակ չուենալով ուսումնասիրել այդ թարգմանութիւնը և բաղադրել զայն բնագրին հետ՝ բան մը չը պիտի կրնանք ըսել անոր յաջող կամ անյաջող գործ մը ըլլալուն մասին: Միայն անոր այլևայլ երեսներուն վրայէն արագ տեսարկ մը պտըտցնելով սա կարծիքը կաղմբցինք թէ պ. Ա. Բակուրեան յաջողած է յեղափոխական բանաստեղծական գոհարով մը օժտել պուլկարական գրականութիւնը:

Անշուշտ հայ ազգը մեծամեծ ակնկալութիւններ չունի պուլկարներու այս նարածիլ պետութենէն՝ որ դեռ ինքզինքը բաւական չորաւոր չզգալուն համար՝ անկարող է նոյն իսկ իր մակերդնացի եղբայրներուն հերոսական կուրի մէջ աւելի գործօն դեր մը ստանձնել: Բայց հայ ազգը երբէք չպիտի մոռնայ այն աչնի ու եղբայրական հերոսսիրութիւնը, որով բացուեցաւ Վառնայի նախահանգիստը՝ թրքական վայրագութիւններու սարսփէն տարտղնած հայ փախստականներու առջեւ՝ եօթը տարի առաջ:

Եւ պ. Ա. Բակուրեան իր ազգին ծառայութիւն մը մատուցած կըլլայ պուլկար ժողովուրդին նուիրելով այսպիսի գրքոյկ մը՝ կուրուած և մաքուր ոճով մը պատմող՝ ընտիր կտորներ՝ մեր յեղափոխական գրականութենէն:

Ու արթնալ Բաքովքի ոգեւորուած այս գրքոյկին ընթերցումէն՝ սա աղօտոր տողերը կը գրէ իր յառաջաբանին մէջ. «... անիկա—հայկական շարժումներն քաղաքական արտաբայտութիւնն է հագեկան և ներթափան առնացումին՝ ազգի մ' որ ինքզինքը իբրեւ պիտանելի ամբողջութիւն մը կը զգայ տակալին: Հոսկէ նաեւ այս գաղափարական բնաւորութիւնը հայկական շարժումին, այս հարստութիւնն ու այլազանութիւնը անոր երեւոյթներուն մէջ, որու մէկ ապացոյցն ալ երեւան կուրալ այս գրքոյկը: Աս տեսակէտէն ամուլ է մակեդոնական շարժումը: Ասիկայ չէ նոր և անկախ երեւոյթ մը, այլ «էփիֆէնօմէն» մը, ինչպէս փիլիսոփայները կը ընեն—Պուլկարի պատմութենէն, անիկայ չունի ոչ իր մասնաւոր պատմութիւնը, ոչ իր մասնաւոր գրականութիւնը...»

Ասկէ զատ յարգելի գրողէ՛ք կորովի գրքով մը երեւան կը բերէ հայկական շարժման նշանակութիւնը, ազգեցողութիւնը, մակեդոնական շարժումին վրայ: Այս հմուտ գրողին տողերուն մէջ՝ հայկական յեղափոխութեան տու-

ած օգուտներու մասին՝ կան այնպիսի աչք ծակող ճշմարտութիւններ, որոնք լրբօրէն կուրացոյին դեռ մինչեւ հիմա կարգ մը ստրկահոգի հայ հակաիշխանականներէ:

Մենք «Նարժումբի» յաջողութիւնով պիտի հայտնենք մեր բնութեցողներուն՝ փոքրիկ քաղուած մը տօքթ. Բաքովքիին այս կազմուելու գրուած քէն:

Տիգրան Աճեմեան

ԹԷ ԻՆՉ Է ՍՕՑԻԱԼԱԿԱՆ ՅԵՂԱՓՈՒՄԻՒՆԻ

Միթէ միեւնոյնը չըլլար մարդկային հասարակութիւններու մէջ ալ: Որոշ հաստատութիւններ, որոնք ծանր ու աստիճանաւոր զարգացման արդիւնք են և, այսպէս ըսնք, որոշ դասակարգի մը օգր կը չնշեն, միթէ յանկարծական կերպով սեփականութիւն չի՞ն ըլլար հասարակական նորաձիգ դասակարգի մը: Չոր օր. եկեղեցին, որ աւատակալութեան տեսն աղնուականութեան կը թանայէր իբր շահագործման միջոց, միթէ այսօր չէ՞ առաջարկած իր բացասութեամբ ինքնները պարտաւորային անոր՝ Գոնտօթէներ, Տանթօներ, Մարաթներ ու Տիարօներ ձեւէն ետք, և միթէ անոր հետ մէկտեղ չը՞ շահագործել բանորակ դասակարգը: Երբոր միասնայի մէջ 1680 յունիս 17ին երրորդ դասակարգի ներկայացուցիչները կազմուեցան ազգային ժողովոյ մէջ, միթէ այս հաստատութիւնն ալ— բարլամէնտը, երկարատեւ յեղաշրջման արդիւնք,— չսկսաւ յանկարծական կերպով շրջիլ, անտիլ, նայիլ, այսպէս ըսնք, մանր արտագրութեանէ ծնած մանուկ— պարտաւորային շրջառութեամբ, անդառնութեամբ, աչքերով այսինքն ներկայացնել ու պայտպանել երրորդ դասակարգի իրաւունքներն ու շահերը: «Երկարութեամբ զորդակցութեան միջոցները ծանր ու աստիճանաւոր զարգացան, Ընդհակառակը, երկարութեամբ մը կրնայ յանկարծական կերպով քարթիթախական ձեռնարկութեան վերածուիլ, այսինքն ձեռնարկութեան մը, որ քարթիթախականապէս կը պաշտօնաւորէ ու ափ մը դրամատէրներուն հարստանալուն կը ծառայէ, վերածուել ձեռնարկութեան մը, որ սօցիալիստականապէս կը պաշտօնաւորէ ու բացարձակօրէն ընդհանուրին օգտին կը ծառայէ:» Ու ինչպէս որ ծնելու ատեն սղուն բոլոր ֆունքցիաները—արեան չըլլում, շնչառութիւն, մարսողութիւն,— միեւնոյն ժամանակ կը յեղափոխին, նոյնպէս ալ երկարութեամբ բոլոր պաշտօնավորութիւնները պէտք է միեւնոյն ժամանակ յեղափոխին, որովհետեւ սերտ կապուած են իրարու մէջ: Չը ծնիր սղուն միայն գրուելու առաջին շարժում, երկրորդին՝ ստաբիլ, ու յետոյ ձեռքերը, այլ բոլորը յանկարծական կերպով, նոյնն է հասարակութիւններու մէջ ալ:

Ներկայ յօդուածը աւարտելէս ա-

ոսջ կուզեմ ուշադրութիւն դարձնել պարագայի մը վրայ որպէս զի կարճատև մարդիկը ու թուուցիկ խնդրեր, որոնք առատութեամբ կը գտնուին երկրիս չորս կողմը...

Անդեան Յակոբեան (Շարունակելի)

ՊԱՃՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

(Շար. Ասխորհրդի քիւիկն եւ վերջ)

Իսկ փաստը իսկական դաւաճիրներու մասին... Ահա՛: Արդումանեանցի անմեղ նամակէն յետոյ...

Պարզ է որ միութիւնը փութացնողները եղան վերակազմակերպութիւնը...

1902, փետր. 11 Ննչ կուս. կեդր. յիւանդին Լօնտօն

Մերելի ընկերներ եւ պաշտօնակիցներ

Ես իմ սոյն պատասխանս հետագրած էի ձեզի արդէն, երբ ստացայ Կ. շրջաբերակները...

պակաս խնդիրներու պատճառաւ համարաչափութիւնը խանգարելու ատեն չէ՛) Իրաց առեալ Գալիֆօրնիոյ եւ Երկաքոյի մասնաճիւղերը...

Ամէն բան բան ինկատի առնելով ես ալ համամիտ գտնուեցայ հետագրի ուղւոյն եւ իմաստին...

Չարմանքս մեծ եղաւ այսօր երբ հեռագիր մը ստացայ վազէէն՝ զբամ խնդրող...

Չարմանքս մեծ եղաւ այսօր երբ հեռագիր մը ստացայ վազէէն՝ զբամ խնդրող, վերջին երեք շաբթուան միջոցին...

պատճառ կը դառնան: Աս ալ պատճառ մը կրնայ սեպտիլ թէ ինչու միութիւնը փութացնենք՝ քանի որ բացարձակ մեծամասնութիւնը մեր կողմն է...

100 ոսկին սակայն եթէ ոչ ամբողջովին գէթ ամսուան մը միջոցին մաս առ մաս կտանաք կը յուսամ:

Կր փութամ փոստին յանձնելու համար: Սիրայիլ բարեկեցութիւն Կ. Յ. Փալիպպեան

Տող մը իսկ չենք աւելցնել այս մասին մեր կողմէն՝ իբր խորհրդածութիւն, միայն սա կըսենք որ անկիւններուն մէջ յոխորացող ապստամբներ թող քաջութիւնը ունենան...

Այսպէս, իբր նախանձանքի կրուակցութեան պատուին եւ սկզբունքներուն, կազմարարները որ շրջանայեաց ըլլան այլ հեւ ըստը անոնք...

Ի դիմաց Ննչ կուս. Ռուսոնքի Մասնաճիւղին Ատենադպիր Ատենապետ Գրգո (ԿՆ)Պ Մուրճ 19 մարտ, 1903 Ռուսոնք

ԱՐՁԱԳԱՆԲ

Շունչային—կը տեղեկանանք թէ տեղւոյն աղջկանց վարժարանի տիկնանց խնամակարութիւնը, նկատելով որ իրենց վարժարանն այլեւս տնտեսաբար զարձակ է՝ խորհուրդ եւ վտանգաւոր ըլլալուն համար, որոշած էր իր անդամուհիներէն երեսօ քը խրկել Պուլկարիոյ եւ Ռուսոնքի մը շինութեան ի նպաստ հանգանակութիւն կատարելու: Խնամակարութիւնը իր այս որոշումին համար գլխաւոր է տեղւոյն թաղական խորհրդին, բայց վերջինը մերժել է իր վաւերացումը տալ՝ առարկելով թէ ինչքանազան է եկեղեցւոյն նորոգութեան համար հանգանակութիւն կատարելու եւ եթէ նորոգութեան բան մը աւելնայ զպարտքին համար ալ կը մտածէ:

Մենք մեր կողմէն առ այժմ օտ չափ միայն պիտի ըսենք որ-եկեղեցիի մը նորոգութեան աւելի կարելու է վարժարանի մը շինութիւնը, եւ թաղ. խորհուրդն ազգային շահերու դիմ ելած կըլլայ եթէ պատ քաջ Շունչայի բարեսէր տիկիններուն գործունէութեան առջեւ:

Յիշկպիկն—Մեր թղթակիցը նամակով կը կրտսնէ թէ Պուլկարիոյ ազգ. վարչութեան Պուլկարիոյ համար նշանակուած այցելու հովիւ Տ. Ա. հան վարդ. Յակոբեան Ս. Չատկէն ստալ հասած է Յիշկպիկ: Այդ նամակէն կը քաղենք հետեւեալը:

«Չեմ կրնար զանց ընել յիշել հոս Սրման փաշային չիք կողակտին ծիծաղելիութիւնը՝ երկու տողով մէջս լեան քահանան՝ կողակտը գլուխին հաւասար բարձրութեամբ բռնած՝ «խոսուելիթոնով մը բեմ բարձրացուց եկեղեցւոյն մէջ եւ երեք-չորս վարկեան նուիրական մասունք»... Ետքը կէս մը ձայնաւոր, կէս մը բաղձայն կարգաց փաշային շափուած ձեւուած կեղծ ուպատիբ խօսքերը, որոնք մատնիչի մը սա խօսքերուն կը նմանէին. «ես կը սիրեմ ազգս, ես կը սիրեմ հայրենիքս»:

«Բայց դուրս է գալիս որ Օրման փաշան ինքզինք Պուլկարիոյ ալ պատրիարք ճանչնալով, վարդապետ ոչ միայն այցելու հովիւ, այլ պատրիարքական փոխանորդ» խրկել է...

Քիւիկն— Թիւ 105 «Շարժում» մէջ ձեռք «Ձէյթուն» վերնագրով ազգայնաբար յօդուածը, հարկադրեց զիս առաջարկել ձեզ որ, հաճիք ընդունել նամակիս հետ ձեզ գրկած 5 ֆր. ըս՝ խնդրապատ Ձէյթունի եւ խնդրեց որ իբր արտայայտիչը ազգային ամենազանիւ զգացումներու հաճիք նախաձեռնարկը ըլլալ Պուլկարիոյ մէջ՝ քաջ համոզուած լինելով որ Պուլկարիոյ այս գաղութին մէջ շատ քիչերը պիտի գտնուին ձեր այդ ամենազանիւ ձեռնարկին հանդէպ խուլ մնացողներ:

Այլիս Ռուբիլի

